

ՓԵՐԻՉԻ ՀԱՅ ԲԺՇԿ. ՄԻՈՒԹԻՒՆԸ

Փարիզի Հայ Բժշկական Միութիւնը, արձակուրդի առթիւ երկու ամիս դադարէ վերջ, իր ամսական նիստը գումարեց Հոկտեմբեր 17ին՝ ֆրոնֆ. Կ. Աղաջանեան պարզեց «Ջղերու ուռերու» մասին իր տեսակէտները, զորս վերջերս հրատարակած էր «Թէզի»ի մը մէջ, Գեղագործ-քիմիագէտ Պ. Տովսէփ Սվաճեան շահեկան հաղորդագրութիւն մը կարդաց՝ վերջին տարիներու ընթացքին զանազան հիւանդութիւններու դէմ գործածուած «քիմիական նորագոյն դեղերուն» մասին:

Նոյեմբեր 21ի ամսական նիստին՝ Տքթ. Վ. Պայասան խօսեցաւ «չարպաման (*lipolide*) նիւթերով Թոքախտի դարմանումին» մասին: Իսկ Պ. Կ. Տ. Բասմաջեան հաղորդագրութիւն մը ըրաւ «Ընդհանուր բժշկութեան պատմութեան» վրայ, նախնական ժամանակներէն սկսեալ մինչեւ մեր օրերը: Բանախօսը հետզհետէ նկարագրեց բժշկութեան վիճակը Եգիպտացոց, Ասորբաբելացոց, Հնդկաց, հին Պարսից եւ Եբրայեցոց քով՝ յետոյ՝ խօսեցաւ յունական դիցաբանական ժամանակի բժշկութեան վրայ, հասնելով մինչեւ Մեծն Հիպոկրատ, որուն վրայ՝ ինչպէս եւ իր հաստատած դպրոցին վրայ մանրամասնօրէն ծանրացաւ մինչեւ Գաղիանոս, որուն հետեւողները յիշատակելէ ետք՝ Բասմաջեան անցաւ արաբական շրջանին, ուր մի առ մի Թուսց բժշկութեան մէջ համբաւ ստացած արաբ մեծ դէմքերը, եւ շեշտեց ասոնց՝ ու եւրոպական եւ հայկական բժշկութեան հետ ունեցած յարաբերութեան կարեւորութիւնը: Այս առթիւ Պ. Բասմաջեան ինդրեց սրբագրել Ամիրտովլաթի իր յառաջաբանին մէջ (Եր. Ա. տող 8) բժշկութեան ծագման մասին հետեւեալ նախանդասութիւնը՝ «Քրիստոսէ երկու դար առաջ...» եւ կարդալ «Քրիստոսէ ՔՍԱՆ դար առաջ...»:

Դեկտեմբեր 19ի նիստին՝ Միութեան նախագահը՝ Տքթ. Քոլօլեան առաջարկ ըրաւ հիւանդապահութեան տարրական դասընթացք մը բանալ ժողովուրդին համար, կարդաց այդ մասին ծրագիր մը եւ յայտնեց Թէ ապահոված է Տիկնանց Միութեան Կ. Խաչի աջակցութիւնը: Ժողովը ընդունեց այս առաջարկը եւ ներկայացուած ծրագիրը:

Ժողովը Տքթ. Քոլօլեանի առաջարկութեամբ անհրաժեշտ նկատեց նաեւ Եկեղեցիի Բուժարանին մէջ մասնաւոր օր մը յատկացնել հայ մանուկները կեղծմաշկի դէմ պատուաստելու համար:

Որոնցմէ Յետոյ հաղորդագրութիւններ ըրին Տքթ. Էօր. Ար. Թէն՝ «Կարկամախտէ (Թեթանոս) բռնուած հիւանդի մը մասին», Իսկ Տքթ. Եաղուպ՝ «Ճարագայթներով ի գուր դարմանուած եւ յետոյ գործողութեամբ բուժուած արգանդի ուռի մը մասին»: